ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Նունուֆար Ալեքյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության ատոմային էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Կիպրոսի Հանրապետություն, քաղաք Լառնակա,

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն 2025 թվականի հունիսի 29-ից հուլիսի 4-ը Լառնակայում Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) կողմից կազմակերպված «Regional Workshop on Industry-Academia-Government Collaboration for Capacity Building in Nuclear Education and Training» խորագրով միջտարածաշրջանային աշխատանքային հանդիպմանը,

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   ԱԷՄԳ-ի կարևորագույն մոտեցման համատեքստում քննարկվել են ներքոնշյալ թեմաները
   - Միջազգային համագործակցության մոտեցումների դերը միջուկային էներգետիկայի բնագավառի աշխատուժի կայուն զարգացման գործում:
   - Միջուկային էներգետիկայի բնագավառում կրթության վերաբերյալ հրապարակումների արդյունքների ամփոփում, համաշխարհային ասպարեզում գիտելիքների կառավարման լավագույն փորձը:
   - Միջուկային էներգետիկայի բնագավառում կրթության և վերապատրաստման ոլորտում արտաքին խորհրդատվական կենտրոնի համագործակցության հիմնական մարտահրավերները կամ թույլ կողմերը:
   - Աշխատուժի գնահատում միջուկային էներգետիկայի բնագավառում ըստ կոմպետենտության:
   - ԱԷՄԳ-ի պլանավորված փաստաթուղթը միջուկային գիտելիքների կառավարման վերաբերյալ:
   - Տարբեր երկրներում միջուկային էներգետիկայի բնագավառի կրթության և վերապատրաստման ոլորտում արդյունաբերության և ակադեմիական գիտությունների համագործակցության ներկայիս ուժեղ կողմերը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Միջոցառման շրջանակներում ներկայացվել են զեկույցներ ինչպես Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) ներկայացուցիչների, հրավիրված փորձագետների, այնպես էլ մասնակից երկների ներկայացուցիչների կողմից:
Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Ղազախստանի, Պորտուգալիայի, Բուլղարիայի, Ուզբեկստանի, Տաջիկստանի, Մոնտենեգրոյի, Լեհաստանի, Կիպրոսի, Չեռնոգորիայի, Ալբանիայի, Էստոնիայի, Լատվիայի, Սերբիայի, Ռուսաստանի Լիտվայի ներկայացուցիչներ, որոնց մի մասը հանդես են եկել ելույթներով: Ներկայացվել է արդյունաբերության, ակադեմիայի և կառավարության համագործակցության հնարավորությունները միջուկային կրթության և վերապատրաստման ոլորտում կարողությունների զարգացման համար, ինչպես նաև միջուկային էներգետիկայի բնագավառում աշխատուժի զարգացման համար արդյունավետ միջկառավարական գործակալությունների համագործակցությանը առնչվող հարցեր:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հանդիպման ավարտին կազմակերպիչների և մասնակիցների կողմից շեշտվել է հետագայում ևս նմանատիպ միջոցառումների անցակացման կարևորությունը՝ հաշվի առնելով ատոմային էներգետիկայի բնագավառում համապատասխան որոկավորում ունեցող մասնագետների պահանջարկը:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ակնկալվում է, որ նմանատիպ հանդիպումների անցկացումը հնարավորություն կտա ավելի արդյունավետ իրականացնել ատոմային էներգետիկայի բնագավառի մասնագետների պատրաստման և վերապատրաստման նախանշված ծրագրերը՝ կիրառելով բնագավառում առաջատար երկրների փորձը:

ՀՀ ՏԿԵՆ էներգետիկայի վարչության
ատոմային էներգետիկայի բաժնի
գլխավոր մասնագետ — Նունուֆար Ալեքյան

07.07.2025թ.